

Մարզպետի հանդիպումը Թալինի տարածաշրջանի գյուղական համայնքների բնակիչների հետ

Հունիսի 18-ին մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Թալինի տարածաշրջան եւ քաղաքացիների ընդունելություն կազմակերպեց Կաքավաձոր, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն, Ն. Բազմաբերդ, Կաթնաղբյուր համայնքներում:

Հարեանությամբ գտնվող գյուղական այս բնակավայրերում հիմնախնդիրները միանման են: Գրեթե բոլոր համայնքներում էլ բնակիչները, ովքեր նախապես էին տեղեկացել մարզպետի այցելության մասին եւ հավաքվել էին գյուղապետարանում կամ գյուղի կենտրոնական մասում, առանձնապես կարեւորեցին ոռոգման եւ խմելու ջրամատակարարման հարցերը: Մարզի ղեկավարը իրազեկ էր տեղերում բարձրացված խնդիրներին եւ գյուղացիների համար պարզաբանումներ կատարեց դրանց լուծման համար: Բնակիչները իրենց հերթին առաջարկություններ արեցին հարցերի շուրջ եւ պատրաստալամություն հայտնեցին համատեղ մասնակցել իրականացվող ծրագրերին, որպեսզի ջրամատակարարումից բավարար օգտվեն:

Բարձրացվեցին հանրային նշանակության այլ հարցեր, որոնց լուծման վերաբերյալ նույնպես համապատասխան պարզաբանումներ կատարվեց:

Մարզպետին ուղղվեցին նաեւ անձնական բնույթի հարցեր: Մի խումբ անապահովների տրամադրվեց դրամական աջակցություն, տրվեց պետպատվերով բուժօգնություն ստանալու հնարավորություն: Բնակիչներին մարզպետը հորդորեց իրեն դիմել ցանկացած հարցերով եւ ցանկացած ժամանակ: